

Կ-877¹-22.10.2015,03.11.2015-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի (այսուհետ՝ օրենք) 46-րդ հոդվածում «15-ը» թիվը փոխարինել «20-ը» թվով:

Հոդված 2. Օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերում, 50-րդ և 63-րդ հոդվածներում «25» թիվը փոխարինել «20» թվով:

Հոդված 3. Օրենքի 66-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն օրենքի 64 հոդվածի համաձայն պահված (գանձված) շահութահարկի գումարը հարկային գործակալը պարտավոր է ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման եռամսյակին հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ վճարել բյուջե: Ընդ որում, հարկային գործակալը պարտավոր է եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի առաջին ամսվա 20-ից ոչ ուշ վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով էլեկտրոնային եղանակով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին՝ անցած եռամսյակում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին:»,

2) 2-րդ մասում «հարկային պարտավորությունների» բառերը փոխարինել «շահութահարկի պարտավորության» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: